

ՁԵՐԲԱԿԱԼԿԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ

ՆՐԱՆՑ ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ Ոստիկանության համակարգի ձեռքակալված անձանց պահելու  
վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական  
դիտորդական խմբի անդամները խնդրում են. գանկազած  
ոտնձգության, Ձեր իրավունքների  
խախտման և հարազատների ապօրինի պահման  
դեպքում գանգահարել մեր թեժ գծին,  
Ձեր գանգի գաղտնիությունը երաշխավորում ենք

*Թեժ.գիծ. 077 85 99 66*

Գրքույկը պատրաստել են՝

*Սուրեն Իսկանդարյան՝ խմբի նախագահ  
Արամ Թադևոսյան  
Հասմիկ Սահակյան*

- I. Ներածություն
- II. Ընդհանուր դրույթներ
- III. Խոշտանգում
- IV. Անձին ազատությունից զրկելը
- V. ՀՀ տարածքում և դրանից դուրս կատարված հանցանք
- VI. Ձերբակալում
- VII. Խափանման միջոցներ
- VIII. Անձանց ՁՊՎ-ում պահելու սկզբունքները
- IX. Խուզարկություն
- X. Ձերբակալվածի սննդի, իրերի և արժեթղթերի մասին
- XI. Պաշտպան
- XII. Անձանց հարցաքննությունը և նրանց իրավունքները
- XIII. Սնունդ
- XIV. ՁՊՎ-ում պահվող անձանց Իրավունքներն ու պարտականությունները
- XV. Տեսակցություն և հեռախոսազանգ
- XVI. Հանձնուք
- XVII. Զբոսանք
- XVIII. Բուժ.սպասարկում
- XIX. Ձերբակալվածի ազատման սկզբունքները
- XX. Արդարացված քաղաքացու իրավունքները և նրան պատճառած վնասի փոխհատուցումը
- XXI. Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելը
- XXII. ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի մասին
- XXIII. Հավելվածներ

# I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ) նախընտրեց քաղաքակիրթ պետությունների ընտանիքում իր տեղը գրավելու ուղին, այդ ճանապարհին որդեգրելով ժողովրդավարական, իրավական պետություն կերտելու ռազմավարությունը:

Նախընթաց տարիների ընթացքում ՀՀ-ում մի շարք միջոցառումներ են իրականացվել մարդու իրավունքները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ, վավերացվել են մարդու իրավունքների ոլորտի տասնյակ պայմանագրեր, որոնց արդյունքում բարեփոխվել է ՀՀ օրենսդրությունը:

ՀՀ Սահմանադրությունում ընդունված փոփոխությունների արդյունքում՝ Սահմանադրության 3-րդ հոդվածը հռչակում է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրական դրույթի համաձայն՝ ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են և գերակա են ներպետական օրենքների հանդեպ:

ՀՀ-ն վավերացրել է մարդու իրավունքների ոլորտի այնպիսի հիմնարար միջազգային պայմանագրեր, ինչպիսիք են՝ Եվրոպայի խորհրդի 1950թ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան և դրա արձանագրությունները (1-8, 11, 12, 14), 1987թ «խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստագնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու մասին» եվրոպական կոնվենցիան և նրա երկու ածանադրությունները, 2002թ. ՄԱԿ-ի «խոշտանգումների և այլ դաժան անմարդկային կամ արժանապատվությունը նվաստագնող վերաբերմունքի կամ պատիժի դեմ» կոնվենցիայի կամրնտիր արձանագրությունը և այլն:

Գրքույկում ներկայացված է ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի մասին, որը ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում պահվող անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդիրներով զբաղվող, վերահսկող մարմին է:

Ինչպես նաև, համակողմանիորեն ներկայացվում են անձանց և քաղաքացիների իրավունքներին վերաբերվող մի շարք օրենսդրական դրույթներ և հատվածներ միջազգային պայմանագրերից, ՀՀ սահմանադրությունից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքից, ՀՀ քրեական օրենսգրքից, ՀՀ ձերբակալված և կայանավորված անձանց պահելու օրենքից, ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգից, ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդական խմբի գործունեության ներքին կանոնակարգից, որոնց իմացությունը հնա-րավոր կդարձնի ավելի արդյունավետ կազմակերպել անձանց և նրանց հարազատների իրավունքների պաշտպանությունը:

Գրքույկի կարևորագույն նպատակներից մեկն այն է, որ ձերբակալված անձին արգելանքի տակ պահելն իրականացվի օրինականության, ձերբակալված անձանց օրենքի առաջ հավասարության, մարդասիրության, անձի իրավունքները և արժանապատվությունը հարգելու սկզբունքների հիման վրա:

## II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով, որպես անմիջականորեն գործող իրավունք:

Ազատության իրավունքը սերտորեն կապված է անձեռնմխելիության, այն է՝ պետության կողմից երաշխավորված մարդու անվտանգության և ազատության հետ, որը բացառում է մարդու անձի, պատվի, արժանապատվության նկատմամբ ցանկացած ոտնձգություն:

«Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»:

Պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը օրենսդիր մարմնի միջոցով՝ ներպետական իրավական համակարգի ստեղծմամբ:

Մարդու և քաղաքացու որոշ հիմնական իրավունքներ և ազատություններ կարող են սահմանափակվել օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներն ու ազատությունները կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել: Հիշյալ իրավունքների և ազատությունների շարքում բացառություն են կազմում խոշտանգումների չենթարկվելու, դատական, ինչպես նաև այլ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների, խախտված իրավունքները վերականգնելու, անկախ և անկողնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության, իրավաբանական օգնություն ստանալու, պաշտպան ունենալու, օրենքով չարգելված ցանկացած գործողություն կատարելու իրավունքները:

Դատավճռի հիման վրա ազատությունից զրկված ոչ մի անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մի հանգամանք չի կարող հիմք ծառայել խոշտանգումները կամ այլ դաժան, անմարդկային կամ

արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժն արդարացնելու համար:

Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանման, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:

Բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև:

Իրավունքների, ազատությունների և պարտականությունների խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, գույքային վիճակից, ծննդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Յուրաքանչյուր ոք, իր գործի քննության ժամանակ, որպես իրավական փաստարկ, իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով ՀՀ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները:

### III. ԽՈՇՏԱՆԳՈՒՄ

*«Խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ ու համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից կամ հատուկ են դրանց:*

- Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային, նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք:
- Խոշտանգումը որակվում է որպես քրեական հանցագործություն և համապատասխան պատիժ է սահմանվում դրա համար: Խոշտանգումը, ցանկացած այնպիսի գործողություն է, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ, մարմնական կամ հոգեկան տառապանք: Հիշյալ գործողությունը պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, իսկ ծանրացուցիչ հանգամանքների դեպքում, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

- Ոստիկանության աշխատակցի կողմից մարդուն խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելը, կամ նրա նկատմամբ բռնություն կիրառելն արգելվում է և առաջացնում է պատասխանատվություն, օրենքով սահմանված կարգով :

---

Եթե Ձեզ խոշտանգել են կարող եք դիմել՝

ՀՀ նախագահի աշխատակազմին, ՀՀ գլխավոր դատախազին, ՀՀ ոստիկանապետին, Մարդու իրավունքների պաշտպանին / տես հավելված 3 /:

## ***IV. ԱՆՁԻՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈ***

*Ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով:*

- Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝
  - ✓ անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից
  - ✓ անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը
  - ✓ օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով
  - ✓ առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով
  - ✓ անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու այլ մարմին ներկայացնելու նպատակով
  - ✓ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով
  - ✓ ՀՀ անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

---

Այլ դեպքերում կարող եք դիմել՝

ՀՀ նախագահի աշխատակազմին, ՀՀ գլխավոր դատախազին, ՀՀ ոստիկանապետին, Մարդու իրավունքների պաշտպանին / տես հավելված 3 /:

## V. ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆՑԱՆՔԸ

*Հանցանք կատարած անձինք հավասար են օրենքի առջև և ենթակա են քրեական պատասխանատվության՝ անկախ սեռից, ռասսայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից, գույքային կամ այլ դրույթունից:*

- ՀՀ տարածքում հանցանք կատարած անձը ենթակա է պատասխանատվության՝ ՀՀ քրեական օրենսգրքով: ՀՀ տարածքում կատարված է համարվում այն հանցանքը, որը սկսվել, շարունակվել կամ ավարտվել է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ հանցակցությամբ կատարվել է այն անձանց հետ, ովքեր հանցավոր գործունեություն են իրականացրել այլ պետության տարածքում:
- ՀՀ դրոշի տակ գտնվող կամ ՀՀ տարբերանշանը կրող նավի, կամ թռիչքում գտնվող օդանավի ու օդային այլ սարքի մեջ հանցանք կատարած անձը, անկախ դրա գտնվելու վայրից, ենթակա է քրեական պատասխանատվության՝ ՀՀ քրեական օրենսգրքով, եթե ՀՀ միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ: ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն է կրում նաև այն անձը, ով հանցանք է կատարել ՀՀ ռազմական նավի կամ օդանավի վրա՝ անկախ դրա գտնվելու վայրից:
- ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարած ՀՀ քաղաքացիները, Հայաստանում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք, ենթակա են քրեական պատասխանատվության՝ ՀՀ քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը ճանաչված է հանցագործություն դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ, և եթե նրանք նույն հանցագործության համար չեն դատապարտվել այլ պետությունում: Նշված անձանց դատապարտելիս պատիժը չի կարող գերազանցել օտարերկրյա այն պետության օրենքով նախատեսված պատժի վերին սահմանը, որի տարածքում կատարվել է հանցանքը:
- ՀՀ տարածքում ձերբակալված կամ կալանավորված օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ունեն ՀՀ քաղաքացիների համար սահմանված իրավունքները, ազատությունները, պարտականությունները, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով և օրենքով այլ բան նախատեսված չէ:
- Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի պահելու տեղի և հիմքերի մասին քրեական վարույթն իրականացնող մարմինը 24 ժամվա ընթացքում դիվանագիտական ուղիներով հայտնում է արգելանքի վերցված անձի քաղաքացիության, իսկ եթե նա քաղաքացիություն չունի՝ նրա մշտական բնակության պետությանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև շահագրգիռ այլ պետությանը:

Եթե ՀՀ միջազգային պայմանագրերով արգելանքի վերցված օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին, իրավունք է վերապահված կապվելու համապատասխանորեն իր քաղաքացիության պետության կամ իր մշտական բնակության պետության համապատասխան ներկայացուցչի կամ այդպիսի կապ հաստատելու իրավասություն ունեցող այլ ներկայացուցչի հետ, կամ այդ ներկայացուցչի կողմից իրեն այցելության, ապա արգելանքի վերցված անձի կողմից այդ իրավունքի իրականացման խնդրանքի դեպքում, պետք է այն բավարարել:

Այն ձերբակալված կամ կալանավորված անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հաստատություն չունեցող երկրի քաղաքացի են, ինչպես նաև փախստականները կամ քաղաքացիություն չունեցող ձերբակալված կամ կալանավորված անձինք, իրավունք ունեն կապեր հաստատելու և պահպանելու այն պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության հետ, որը ստանձնել է այդ անձանց շահերի պաշտպանությունը կամ նրանց պաշտպանությամբ զբաղվող ցանկացած ազգային կամ միջազգային մարմնի հետ:

---

ԶԶ-ում գործող դեսպանատների մասին / տես հավելված 4 /

## ***VI. ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄ***

- Ձեզ ազատությունից զրկելու ժամանակ, Ձեզ իսկ հասկանալի լեզվով պետք է տեղեկացնեն պատճառների մասին, իսկ մեղադրանք առաջադրվելու դեպքում, նաև մեղադրանքի մասին:
- Եթե Ձեզ զրկել են ազատությունից, ապա Դուք իրավունք ունեք անհապաղ այդ մասին տեղեկացնել Ձեր իսկ կողմից ընտրված անձին:
- Եթե ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի կողմից չկա որոշում կալանավորման մասին, ապա ենթակա եք անհապաղ ազատ արձակման:
- Եթե Դուք կասկածվում եք հանցանք կատարելու մեջ, ապա հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում կազմվում է ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է Ձեզ: Ձերբակալման մասին արձանագրությունում նշվում է Ձեր պաշտպանության, ինչպես նաև իրավունքների ու պարտականությունների պարզաբանման մասին:
- Հանցանք կատարելու դեպքում Դուք կարող եք ձերբակալվել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի կողմից՝ հետևյալ հիմքերից յուրաքանչյուրի առկայության դեպքում, եթե՝



- ✓ բռնվել էք քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո
- ✓ ականատեսն ուղղակի մատնանշում է Ձեզ, որպես քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարողի
- ✓ Ձեր և Ձեր հագուստի վրա, Ձեր կողմից օգտագործվող այլ իրերի վրա, Ձեզ մոտ կամ Ձեր բնակարանում կամ տրանսպորտային միջոցում հայտնաբերվել են քրեական օրենքով չթույլատրված արարքի կատարմանը Ձեր առնչությունը վկայող բացահայտ հետքեր
- ✓ կան այլ հիմքեր Ձեզ կասկածելու հանցանքի կատարման մեջ, որ Դուք դեպքի վայրից կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձ եք կատարել, չունեք բնակության մշտական վայր, բնակվում եք այլ տեղանքում կամ Ձեր անձը պարզված չէ:
- Ձեր ձերբակալման ժամկետը հաշվվում է արգելանքի վերցնելու պահից:
- Ձերբակալվելուց հետո հետաքննության մարմնից, քննիչից կամ դատախազի կողմից անմիջապես պետք է ստանաք Ձեր իրավունքների մասին գրավոր պարզաբանում:
- Ձերբակալվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը Ձեզ հայտարարվելուց հետո, քրեական հետապնդման մարմնից անմիջապես անվճար կարող եք ստանալ ձերբակալվելու կամ խափանման միջոց ընտրելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշման պատճենը, իսկ ձերբակալման արձանագրություն կազմելուց հետո՝ դրա պատճենը:

## **VII. ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով:

### **Խափանման միջոցներն են՝**

- ✓ կալանավորումը
- ✓ գրավը
- ✓ ստորագրություն՝ չհեռանալու մասին
- ✓ անձնական երաշխավորությունը
- ✓ հսկողության հանձնելը
- ✓ հրամանատարության հսկողության հանձնելը:

## VIII. ԱՆՁԱՆՑ ՁՊՎ-ում ՊԱՀԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

*Ձերբակալվածներին ՁՊՎ-ում արգելանքի տակ պահելն իրականացվում է օրինականության, քաղաքացիների օրենքի առջև հավասարության, մարդասիրության և անձի իրավունքները և ազատությունները, մարդկային արժանապատվությունը հարգելու սկզբունքին համապատասխան:*

- ՀՀ-ի ՁՊՎ-ները գործում են շուրջօրյա:
- Եթե Դուք կալանավորված եք և Ձեզ պահում են ՁՊՎ-ում, ապա պետք է ապահովեն կալանավորվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգով սահմանված դրույթներով և պայմաններով:
- Եթե Դուք ձերբակալված եք, ապա Ձեզ ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում ձերբակալման արձանագրությունը կամ ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը:  
Իսկ եթե Դուք կալանավորված եք, ապա Ձեզ ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում քննիչի, դատախազի կամ դատավորի որոշումը:
- Ձեզ ՁՊՎ ընդունելու կամ մի հիմնարկից մյուսը տեղափոխելու մասին, ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է կապի հնարավոր միջոցով, անհապաղ տեղյակ պահել Ձեր ընտրած անձին:
- Ձեզ մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ զանգատ ունենալու դեպքում, ոստիկանության մարմնի հերթապահը պարտավոր է հրավիրել բուժաշխատողի, հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել նաև Ձեր ցանկությամբ ընտրված բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս:
- ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում անհատական օգտագործման նպատակով Ձեզ պետք է տրամադրվի մահճակալ, անկողնային պարագաներ և սպիտակ-կեղեն, խոհանոցային սպասք, օձառ, հիգիենիկ թուղթ, գրենական պիտույքներ (թուղթ, գրիչ), լրագրեր, մենախուցը մաքրելու առարկաներ և կենցաղում օգտագործվող այլ առարկաներ՝ ՁՊՎ-ի վարչակազմի հսկողությամբ:
- Անձնական հիգիենայի համար ՁՊՎ-ում Դուք կարող եք օգտվել տաք ջրով, ցնցուղով լոզանք ընդունելու հնարավորությունից՝ մինչև 15 րոպե տևողությամբ:
- Մենախցերում օդի ջերմաստիճանը  $+18^{\circ}\text{C}$ -ից ցածր չպետք է լինի:

---

ՁՊՎ-ում Ձեր ցանկացած իրավունքի խախտման դեպքում կարող եք դիմել՝  
ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբին, ՀՀ ոստիկանապետին, Մարդու իրավունքների պաշտպանին, մարզը հսկող դատախազին / տես հավելված 3 /:

## **IX. ԽՈՒՉԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

*ՁՊՎ-ի անվտանգությունն ապահովելու նպատակով ՁՊՎ ընդունվող յուրաքանչյուր անձ ենթարկվում է անձնական խուզարկության:*

- Արգելվում է Ձեզ անձնական խուզարկության ենթարկել հակառակ սեռի ներկայացուցչի կողմից կամ նրա ներկայությամբ:
- Անձնական խուզարկության ժամանակ Ձեզանից առգրավված սննդամթերքը, դրամը, արժեթղթերը, թանկարժեք իրերն ու առարկաները, վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ կարող են փոխանցվել կամ Ձեր հաշվին ուղարկվել Ձեր ազգականներին կամ այլ լիազորված անձանց:
- Անձնական խուզարկությունից, իրերի զննությունից, բուժզննությունից և սանիտարական մշակումից հետո, ոստիկանության մարմնի հերթապահը Ձեզ տեղեկացնում է Ձեր իրավունքների և պարտականությունների, ՁՊՎ-ի ներքին կանոնակարգի պահանջների և սահմանված կարգի խախտման համար նախատեսված պատասխանատվության, Ձեր նկատմամբ հսկողություն իրականացնելու համար առկա տեխնիկական միջոցներ, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու հնարավոր դեպքերի մասին, որի փաստը հաստատվում է Ձեր ստորագրությամբ:

## **X. ՁԵՐԲԱԿԱՎԱԾԻ ՄՆՆՂԻ, ԻՐԵՐԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ**

- ՁՊՎ ընդունվելուց Ձեզ մոտ թողնվում են այն առարկաները, իրերը և սննդամթերքը, որոնք թույլատրվում են պահել Ձեզ մոտ խցերում /տես հավելված 2/:
- Առգրավված և արգելված առարկաները, իրերը և սննդամթերքն ընդունվում են պահպանության կամ ոչնչացվում են ոստիկանության մարմնի պետի պատճառաբանված որոշման հիման վրա, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:
- Առգրավված դրամը, արժեթղթերը և թանկարժեք իրերն ի պահ են հանձնվում ոստիկանության մարմնի ֆինանսական բաժին, իսկ անձնական իրերը՝ պահասենյակ: Անձնական փաստաթղթերը, նամակները, ծոցատետրերը, լուսանկարները, առգրավված առարկաները և իրերը, շքանշաններն ու մեդալները, որոնց պատկանելությունը պարզված չէ, փոխանցվում են վարույթն իրականացնող մարմին:
- Դրամը, արժեթղթերը և թանկարժեք իրերն ընդունելու մասին ֆինանսական բաժնում 2 օրինակից լրացվում է կտրոն, որի մեկ օրինակը ստորագրությամբ տրվում է Ձեզ, իսկ երկրորդ օրինակը կցվում է Ձեր անձնական գործին:

## **XI. ՊԱՇՏՊԱՆ**

*Պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրան ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով:*

- Երբ Ձեր քրեական գործով պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ Դուք պաշտպան չունեք, ապա քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի որևէ մեկին երաշխավորել որպես պաշտպան:
- Եթե դուք չունեք համապատասխան միջոցներ պաշտպան վարձելու համար, ապա Ձեզ պետք է տրամադրեն հանրային պաշտպանի ծառայություն /տես հավելված 5/:
- Դուք կասկածյալ կամ մեղադրյալ լինելու ժամանակ կարող եք ունենալ մի քանի պաշտպաններ:
- Իր կարգավիճակը հաստատելու համար, պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմինն ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ և փաստաբանների պալատի կողմից իրեն տրված՝ փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու Ձեր ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշումը:
- ՁՊԿ-ում Ձեզ թույլատրվում է առանձին, անարգել տեսակցել Ձեր պաշտպանի հետ, առանց դրանց թվի և տևողության սահմանափակման:
- Ձեր և Ձեր պաշտպանի տեսակցության անվտանգությունն ապահովելու նպատակով ՁՊԿ-ի ծառայողների կողմից իրականացվում է տեսողական հսկողություն, որը թույլ է տալիս տեսնել, բայց չլսել:

## **XII. ԱՆՁԱՆՑ ՀԱՐԾԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ և ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

*Հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ՝ չորս ժամից ավելի, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի: Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո:*

*Այնուամենայնիվ, օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել ութ, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի համար՝ վեց ժամը: Բժշկի եզրակացության հիման վրա, քննիչը կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված հարցաքննության ժամկետներից ավելի կարճ ժամկետներ:*

- Դուք իրավունք ունեք հարցաքննվելու պաշտպանի մասնակցությամբ: Պաշտպանի մասնակցությունն անհապաղ ապահովելու անհնարինության դեպքում քննիչը պարտավոր է նրա մասնակցությունն ապահովել Ձեզ արգելանքի վերցնելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: Հարցաքննությունից առաջ Ձեզ հնարավորություն է տրվում առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու պաշտպանի հետ: Ամեն դեպքում պաշտպանի հետ տեսակցության ժամկետը չի կարող երկու ժամից պակաս լինել:
- Քննիչը պարտավոր է Ձեզ հարցաքննել մեղադրանք առաջադրելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:
- Եթե Դուք վկա եք, ապա իրավունք ունեք հրաժարվել Ձեր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց, նյութեր և տեղեկություններ ներկայացնելուց, եթե դրանք քրեական գործով կարող են վկայել Ձեր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ:
- Եթե Դուք գտնվում եք վկայի կարգավիճակում, ապա քրեական վարույթն իրականացնող մարմինը և քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարող անձը պարտավոր են Ձեզ և Ձեր մասնակցությամբ կատարվող յուրաքանչյուր քննչական կամ այլ դատավարական գործողություն սկսվելուց առաջ, պարզաբանել Ձեր իրավունքները և պարտականությունները: Վկայի կարգավիճակում Ձեր իրավունքները և պարտականությունները կարող է մեկ անգամ պարզաբանվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ Ձեր առաջին հարցաքննությունից առաջ, և կրկին՝ դատական նիստում:
- Եթե Դուք գտնվում եք կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, տուժողի, վկայի և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց կարգավիճակում, ապա արգելվում է Ձեզանից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, Ձեր իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով:

### ***XIII. ՍՆՈՒՆԴ***

*ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում, պարտավոր են Ձեզ ապահովել առողջության և ուժերի պահպանման համար բավարար անվճար սննդով:*

- ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում, Դուք ձեր միջոցներով կարող եք ձեռք բերել սնունդ և անհրաժեշտ, չարգելված առարկաներ: Սննդամթերքի և առաջին անհրաժեշտության առարկաներ ու իրեր ձեռք բերելու համար դիմում եք ներկայացնում ՁՊՎ-ի պետին:
- ՁՊՎ-ում սնունդն ընդունում են խցերում:

- Ձեր կողմից սնունդն ընդունելուց հրաժարվելու դեպքում ոստիկանության տարածքային բաժնի պետը կամ նրան փոխարինող անձը պարտավոր է պարզել դրա պատճառները և դրա մասին հայտնել քրեական վարույթն իրականացնող մարմնին, ինչպես նաև պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին և գերատեսչական վերահսկողություն իրականացնող վերադաս մարմնին:
- Ձեր կողմից սննդից հրաժարվելու պատճառները պարզելուց հետո, ՁՊՎ-ի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում ձերբակալվածի օրինական պահանջները բավարարելու համար:
- Ձեր սննդի ընդունումից հրաժարվելու փաստը չի կասեցնում Ձեզ այլ վայրեր տեղափոխելը:  
Անհրաժեշտության դեպքում փոխադրումը կարող է իրականացվել բուժաշխատողի ուղեկցությամբ:

## ***XIV. ՁՊՎ-ում ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

*Ձերբակալվածն, օրենքով սահմանված իրավունքներից բացի, իրավունք ունի տնօրինելու օրվա կարգացուցակով իրեն հատկացված ժամանակը: Ձերբակալվածի իրավունքների իրականացման ժամանակ չպետք է խախտվեն այլ անձանց իրավունքները և շահերը:*

- Մենախցում անձնական սանիտարիայի և հիգիենայի պայմաններն ապահովում էք Դուք: Հարդարում եք Ձեր անկողինը և պետք է ունենաք կոկիկ արտաքին տեսք:
- ՁՊՎ-ում սահմանվում է օրվա կարգացուցակ՝ հաշվի առնելով տարվա եղանակը, տեղի կլիմայական պայմանները և այլ կոնկրետ հանգամանքներ:
- ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողներն ամենօրյա շրջագայության ընթացքում պարտավոր են Ձեզանից ընդունել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր առաջարկություններ, դիմումներ և բողոքներ:
- Քրեական հետապնդման մարմնի որոշումների և գործողությունների դեմ ուղղված բողոքները, ինչպես նաև ՁՊՎ-ի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին հասցեագրված առաջարկությունները, դիմումներն ու բողոքներն ուղարկվում են հասցեատիրոջը, մեկ օրվա ընթացքում:
- Առաջարկությունների, դիմումների և բողոքների ուղարկման ծախսերը կատարվում են Ձեր հաշվին: Ձեր անձնական հաշվում դրամի բացակայության դեպքում, հանրապետության տարածքում ծախսերը կատարվում են ՁՊՎ-ի հաշվին: Դիմումների, բողոքների և առաջարկությունների ժամանակավոր դադարեցում կամ սահմանափակում չի թույլատրվում:

- Արգելվում է Ձեր օրինական շահերի և իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներ, բողոքներ և առաջարկություններ ներկայացնելու դեպքում, Ձեր նկատմամբ հետապնդումը: Հետապնդում իրականացնող պաշտոնատար անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:
- Ձեր կողմից խցերի, զբոսաբակի մաքրումը, ամանեղենի լվացումը կատարվում է ՁՊՎ-ի հերթապահի հսկողությամբ: Արգելվում է ինքնասպասարկման հետ չկապված տնտեսական այլ աշխատանքների մեջ ներգրավվելը:
- Ձեզ իրավունք ունեն խցերից դուրս բերել միայն տվյալ դեպքերում.
  - ✓ արտակարգ իրավիճակների դեպքում
  - ✓ ՁՊՎ-ի քննչական սենյակ
  - ✓ զբոսաբակ
  - ✓ սանիտարական մշակման նպատակով
  - ✓ բուժաշխատողի մոտ
  - ✓ խցերում սանհանգույցների բացակայության դեպքում՝ զուգարան
  - ✓ ուղեկցող խմբին հանձնելիս կամ ՁՊՎ-ից ազատելիս
  - ✓ խցերն ախտահանելիս
  - ✓ խցերի ամբողջական խուզարկություն կատարելու նպատակով
- ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է քննիչի, հետաքննություն կատարող անձի, դատախազի, դատարանի (դատավորի) կողմից քննչական գործողություններ, դատահոգեբուժական և այլ փորձաքննություններ անցկացնելու նպատակով, ժամը 10.00-18.00-ն Ձեզ դուրս բերել խցից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ ժամերի:
- Գիշերային ժամերին (տեղական ժամանակով ժամը 22.00-6.00-ն) խցերը բացվում են ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում, իսկ Ձեզ դուրս են բերում միայն արտակարգ իրավիճակների դեպքում, երբ Ձեր կյանքին և առողջությանն անմիջական վտանգ է սպառնում, ինչպես նաև անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու համար:
- ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակում գործելու համար սահմանված կարգով հաստատված պլանով նախատեսված՝ Ձեր իրավունքների սահմանափակման վերաբերյալ, Ձեզ հաղորդվում է պարտադիր կերպով:
- ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կարող են սահմանափակվել Ձեր հետևյալ իրավունքները՝
  - ✓ ՁՊՎ-ի վարչակազմի միջոցով լրացուցիչ սնունդ, առաջին անհրաժեշտության և այլ առարկաներ ձեռք բերել
  - ✓ հանձնուքներ ստանալ
  - ✓ նամակագրություն կատարել
  - ✓ զբոսանքի գնալ
  - ✓ տեսակցություններ ունենալ, հեռախոսակապից օգտվել:
- ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում դադարեցվում է Ձեր տեղաշարժը, մնում եք այնտեղ, որտեղ գտնվել եք արտակարգ իրավիճակ հայտարարվելու պահին, մինչև վարչակազմի ներկայացուցչի նոր հրահանգը:

- Եթե Դուք հղի եք կամ Ձեզ մոտ ունեք երեխա, ապա Ձեզ պետք է տեղավորեն այնպես, որ հնարավորինս նվազագույնի հասցվի ՁՊՎ-ում պահվող այլ անձանց հետ շփումը: Ձեզ համար նախատեսված խցերում տեղադրվում են միահարկ մահճակալներ, երեխային տրվում է մահճակալ, իսկ խցերն ապահովվում են տաք ջրով:
- Ծննդաբերության ժամանակ Ձեզ պետք է տեղափոխեն առողջապահական հաստատություն: Ծննդատուն տեղափոխելու դեպքում ՁՊՎ-ի վարչակազմը դրա մասին տեղյակ է պահում վարույթն իրականացնող մարմնին և Ձեր հարազատներին:
- Ձեր մոտ երեխա ունենալու դեպքում և Ձեր կողմից հիվանդության, ծնողական պարտականությունները բարեխղճորեն չկատարելու, երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև սույն կանոնակարգի պահանջները պարբերաբար խախտելու դեպքում, ՁՊՎ-ի վարչակազմն իրավունք ունի Ձեր երեխային ժամանակավորապես ազգականներին կամ այլ անձանց հանձնելու կամ մանկական հաստատությունում տեղավորելու և Ձեզ ծնողական իրավունքներից զրկելու մասին միջնորդություն ներկայացնել դատարան:
- Դուք երեխային կարող եք ազգականներին կամ այլ անձանց հանձնել սեփական նախաձեռնությամբ: Ընդ որում, ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է ամեն կերպ աջակցել Ձեզ:
- Երեխային ազգականներին հանձնելու համար պարտավոր են Ձեզանից ճշտել, թե ով կարող է իր վրա վերցնել երեխայի խնամքը: Եթե Դուք ազգականներ չունեք, ապա վարչակազմը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ երեխային ժամանակավորապես մանկական հաստատություն հանձնելու համար:

---

ՁՊՎ-ում Ձեր ցանկացած իրավունքների խախտման դեպքում կարող եմք դիմել՝ ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբին, Մարդու իրավունքների պաշտպանին, մարզը հսկող դատախազին / տես հավելված 3 /:

## ***XV. ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՌԱԽՈՍԱԶԱՆԳ***

- Ձեզ հետ տեսակցելու համար Ձեր ազգականը ոստիկանության մարմնի պետին պետք է ներկայացնի սահմանված ձևի դիմում և անձը հաստատող փաստաթուղթ:
- Մերձավոր ազգականների հետ տեսակցություններն անցկացվում են ՁՊՎ-ի ծառայողների հսկողությամբ: Արգելվում է տեսակցության ընթացքում առարկաներ փոխանցելը: Այդպիսի փորձ կատարելու դեպքում տեսակցությունը վաղաժամկետ կդադարեցվի:



- Միաժամանակ թույլատրվում է տեսակցել առավելագույնը երեք չափահաս և երեք անչափահաս անձանց, եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել:
- Արգելվում է տեսակցության նպատակով խցից դուրս բերել՝
  - ✓ հերթափոխի ընդունում հանձնում կատարելու ժամանակ
  - ✓ օրվա կարգացուցակով հաստատված սննդի ընդունման ժամերին
  - ✓ օրվա կարգացուցակով հաստատված ավարտակոչից մինչև վերկաց
  - ✓ սանիտարահամաձարակային միջոցառումներ անցկացնելիս
  - ✓ արտակարգ իրավիճակների ժամանակ
- Ձեր գրավոր դիմումի համաձայն տեսակցությունից հրաժարվելու դեպքում տեսակցությունը կարող է փոխարինվել մեկ հեռախոսազանգով, մինչև 10 րոպե տևողությամբ:
- Հեռախոսազրույցը՝ ներառյալ միջքաղաքային, Ձեզ տրամադրվում է ոստիկանության տարածքային բաժնի պետի սահմանված ժամանակացույցով:  
Հեռախոսազրույցը տեղի է ունենում վարչակազմի ներկայացուցչի տեսանելիության, բայց ոչ լսելիության պայմաններում:
- Հեռախոսային խոսակցության վճարումները, գործող սակագներին համապատասխան, կատարվում են Ձեր հաշվին:

## *XVI. ՀԱՆՁՆՈՒՔ*

- Ձեզ արգելանքի տակ պահելու ընթացքում թույլատրվում է ստանալ մինչև 20կգ հանձնուք, սահմանված քաշի հանձնուքը կարող եք ստանալ միանվագ կամ մաս-մաս:
- Բժշկի եզրակացությամբ՝ դեղորայքի քանակը չի սահմանափակվում:
- Այն առարկաների և սննդամթերքի ցանկը, որոնք Դուք իրավունք ունեք պահել, ստանալ հանձնուքով կամ ձեռք բերել տես հավելված 2/:
- Հանձնուքներ ընդունելու համար կահավորվում է հատուկ սենյակ, որտեղ քաղաքացիների մուտքն ազատ է: Սենյակում դրվում են սեղան, աթոռ, հսկիչ կշեռք, տեսանելի վայրում փակցվում են սույն կանոնակարգով սահմանված հանձնուքներ ընդունելու և հանձնելու մասին կարգը, հանձնուքներով փոխանցվող թույլատրելի առարկաների և սննդամթերքի ցանկը: Փաստում ենք, որ այսպիսի սենյակներ չկան ՀՀ ոստիկանության ոչ մի ՁՊՎ-ում:
- Հանձնուք բերող անձը սահմանված կարգով լրացնում և ստորագրում է դիմում: Դիմումը, ինչպես նաև հանձնուք բերողի անձը հաստատող փաստաթուղթը հանձնվում է ՁՊՎ-ի ծառայողին: Հանձնուքի զննությունը կատարվում է այն բերող անձի ներկայությամբ:
- Հանձնուքից հրաժարվելու դեպքում դիմումի վրա համապատասխան նշում է կատարվում, և հանձնուքը հետ է

վերադարձվում բերողին, իսկ դիմումը կցվում է Ձեր անձնական գործին:

- Հանձնուքները չեն ընդունվում և վերադարձվում են բերողին հետևյալ դեպքերում՝
  - ✓ հասցեատեր ձերբակալվածի ազատ արձակման
  - ✓ հասցեատեր ձերբակալվածի մահվան
  - ✓ սահմանված նորմերին հանձնուքի քաշի անհամապատասխանության
  - ✓ հանձնուքը բերող անձի կողմից համապատասխան փաստաթղթեր չներկայացվելիս
  - ✓ հանձնուքի ընդունման դիմումի սխալ ձևակերպման
  - ✓ ձերբակալվածի կողմից հանձնուքն ստանալուց հրաժարվելիս:
- Հանձնուքները պետք է փոխանցվեն հասցեատիրոջն այն ստանալուց մեկ ժամից ոչ ուշ:
- Հանձնուքում առկա, սույն կանոնակարգով արգելված իրերը, առարկաները և սննդամթերքը վերադարձվում են բերողին:
- Հանձնուքներն ընդունվում են ժամը 10.00-20.00:

## ***XVII. ՁԲՈՍԱՆՔ***

- Ձեր զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից:
- Ձբոսանքը կազմակերպվում է ցերեկային ժամերին:
- ՁՊՎ-ի զբոսաբակերը պետք է սարքավորվեն մարմնամարզությանը զբաղվելու հնարավորությամբ:

## ***XVIII. ԲՈՒԺՍՊՈՍԱՆՈՒՄ***

- ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում Ձեր առաջին իսկ պահանջի դեպքում պարտավոր են հրավիրել շտապ օգնություն:
- ՁՊՎ-ում չի թույլատրվում պահել հոգեկան, սուր վարակիչ և մասնագիտական բուժօգնության կարիք ունեցող ձերբակալվածների: Նշված անձինք պետք է տեղափոխվեն, ՁՊՎ-ի բուժաշխատողի կամ շտապ բուժօգնության բժշկի գրավոր եզրակացությամբ և դրա հիման վրա, ոստիկանության մարմնի մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն:
- Բժշկի կողմից նշանակված դեղորայքը պահվում է հերթապահի մոտ և ընդունվում Ձեր կողմից՝ միայն նրա ներկայությամբ: Յուրաքանչյուր ՁՊՎ-ում պետք է լինի դեղորայքով դեղարկղ:

## **XIX. ՁԵՐԲԱԿԱԼԿԱԾԻ ԱԶԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

- Ձեզ ՁՊԿ-ից ազատ արձակման հիմք են հանդիսանում
  - ✓ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը
  - ✓ ոստիկանության տարածքային բաժնի պետի որոշումը՝ արգելանքի տակ պահելու օրենքով սահմանված առավելագույն ժամկետը լրանալու կապակցությամբ Ձեզ ազատ արձակելու վերաբերյալ:
- ՁՊԿ-ից Ձեզ ազատում է ոստիկանության տարածքային բաժնի պետը, քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը ստանալուն պես:
- Արգելանքի տակ պահելու առավելագույն ժամկետը լրանալուց 24 ժամ առաջ, ոստիկանության տարածքային բաժնի պետը իրազեկում է վարույթն իրականացնող մարմնին, իսկ ժամկետը լրանալու օրը համապատասխան որոշում չստանալու դեպքում՝ սեփական որոշմամբ Ձեզ արձակում է արգելանքից:
- Ձեզ հանձնում են Ձեր անձնական փաստաթղթերը, թանկարժեք իրերը, դրամը, ինչպես նաև տեղեկանք Ձեզ արգելանքի տակ պահելու ժամկետի և ազատ-ման հիմքերի մասին:
- Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով արգելանքից ազատելիս, ապահովվում եք մինչև Ձեր բնակության վայր, անվճար տեղափոխությամբ:
- Եթե Դուք ունեք առողջական խնդիրներ և խնամքի կարիք, ապա արգելանքից ազատելիս ՁՊԿ-ի վարչակազմը ազատման մասին նախօրոք հայտնում է Ձեր մերձավոր ազգականներին կամ այլ անձանց: Մերձավոր ազգականներ չունենալու դեպքում, անհրաժեշտ օգնությունը ցույց է տալիս տվյալ հիմնարկի վարչակազմը: ՁՊԿ-ի ծառայողի ուղեկցությամբ, Ձեզ ուղարկում են բնակության վայր:

## **XX. ԱՐԴԱՐԱՑՎԱԾ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ**

*Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով, պատճառված վնասի հատուցման:*

- Դուք իրավունք ունեք, ազատությունից զրկման կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը, բողոքարկելու վերադաս դատական ատյանում:
- Եթե Դուք արդարացված եք, ապա Ձեր իրավունքների վերականգնման, այդ թվում՝ քրեական վարույթն

իրականացնող մարմինների կողմից Ձեզ պատճառած նյութական վնասի հատուցման իրավունք ունեք:

- Քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից անօրինական ենթարկվելով հարկադրանքի միջոցների, Դուք իրավունք ունեք ստանալ պատճառված նյութական վնասի հատուցում:
- Քրեական վարույթն իրականացնող մարմինները պարտավոր են իրականացնել՝ Ձեր իրավունքների վերականգմանն ուղղված բոլոր միջոցառումները:
- Ձեր անձին կամ գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման, այն պատճառած անձի կողմից:

## **XXI. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼԸ**

*Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկում է Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը, որի համար հիմք կարող է հանդիսանալ՝ արդարադատություն իրականացնելիս նյութա-կան օրենքի նորմի ակնհայտ կամ կոպիտ խախտումը, դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, աշխատանքային կարգապահությունը պարբերաբար կամ կոպիտ խախտելը, դատավորի կողմից վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտում թույլ տալը:*

- Կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն՝ արդարադատության նախարարը, Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը և Վճռաբեկ դատարանի նախագահը՝ միայն վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և պալատի նախագահի նկատմամբ:  
/տես հավելված 6/
- Կարգապահական վարույթ կարող է հարուցվել, եթե առկա է վճռաբեկ դատարանի որոշումը, որով հաստատվել է, որ արդարադատություն իրականացնելիս՝ գործը կամ հարցը ըստ էության լուծելիս, կայացվել է ակնհայտ ապօրինի դատական ակտ, կամ արդարադատություն իրականացնելիս՝ դատավորը թույլ է տվել դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում:  
Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է.
  - ✓ անձի դիմումը
  - ✓ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձի հաղորդումը
  - ✓ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդությունը
  - ✓ ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից կայացված դատական ակտը:
- Դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը քննելու արդյունքում, արդարադատության խորհուրդը

կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը.

- ✓ նախազգուշացում
  - ✓ նկատողություն, որը զուգորդվում է դատավորին 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով
  - ✓ խիստ նկատողություն, որը զուգորդվում է դատավորին 1 տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով
  - ✓ դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը
  - ✓ Վերջինս կիրառվում է միայն այն դեպքում, եթե դատավորի կողմից թույլ տված կարգապահական կոպիտ կամ պարբերական խախտման հետևանքով, նա այլևս անհամատեղելի է դատավորի պաշտոնի համար:
- Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս, Արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան: Որոշումն ընդունվում է խորհրդակցական սենյակում: Գործի քննությունը ավարտված հայտարարելուց հետո, Արդարադատության խորհուրդը հայտարարում է որոշման հրապարակման վայրը և ժամանակը:  
Արդարադատության խորհրդի որոշումները հրապարակվում են «ՀՀ պաշտոնական տեղեկագրում» և ՀՀ Դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքէջում:
  - Դատավճռի կայացման ժամանակ թույլ տված սխալների համար դատավորը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, միայն շահադիտական նպատակներով կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու համար: Հիշյալ արարքը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով, կամ երկուսից մինչև առավելագույնը յոթ տարի ժամկետով ազատազրկմամբ:

**XXII. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼԿԱԾ  
ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ԿԱՅՐԵՐՈՒՄ  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված 06.02.2002թ.-ի Հայաստանի Հանրապետության ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին օրենքի 47 հոդվածի համաձայն՝ ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունն իրականացվում է լիազորված համապատասխան մարմնի ղեկավարի կազմավորած, հասարակական դիտորդական խմբի միջոցով: Ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացման կարգը, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի կարգը և իրավասությունը սահմանում է լիազորված համապատասխան խմբի ղեկավարը:

Հայաստանի Հանրապետության ոստիկանապետը՝ ղեկավարվելով /Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին/ ՀՀ օրենքի 47 հոդվածով, 2005 թվականի հունվարի 14-ին թիվ 1-Ն հրամանով, հաստատեց ՀՀ Ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի կարգը:

Ըստ ներքին կանոնակարգի, ՀՀ ոստիկանապետի կողմից 2006 թվականի մարտի 10-ին ձևավորվեց դիտորդական խումբը:

- ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդական խումբը, ոստիկանությունում ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդիրներով զբաղվող վերահսկող մարմին է:
- Խմբի գործունեության նպատակներն են.
  - ✓ ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների պաշտպանության նկատմամբ հասարակական վերահսկողությունը, նրանց կենցաղային պայմանների բարելավումը, հասարակությանը ՁՊՎ-ների հիմնախնդիրների մասին իրազեկելը
  - ✓ ՁՊՎ-ներում մարդու իրավունքների խախտման դեպքերի նախականիսումը և բացահայտումը
  - ✓ ՁՊՎ-ներում իրավիճակի վերլուծության հիման վրա եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը ՀՀ ոստիկանությանը և հասարակությանը
  - ✓ ՁՊՎ-ների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության և այլ իրավական ակտերի ուսումնասիրումը, անհրաժեշտության դեպքում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր

իրավական ակտեր նախապատրաստելու վերաբերյալ  
առաջարկությունների ներկայացումը:

### **ԽՄԲԻ ՄԱՍԻՆ**

- Խմբի կազմը հաստատվում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով:
- Խումբն իր կազմից ընտրում է նախագահ՝ մեկ տարի ժամկետով, անհրաժեշտության դեպքում նաև տեղակալ: Խմբի նախագահը ղեկավարում է խմբի գործունեությունը:
- Խումբը բաղկացած է ոչ պակաս, քան յոթ և ոչ ավել, քան քսանմեկ հոգուց: Ընդ որում, յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն խմբում կարող է ունենալ մեկ ներկայացուցիչ:
- Խմբի կազմում նոր անդամի ընդգրկման մասին որոշումն ընդունվում է խմբի անդամների մեծամասնության համաձայնությամբ, որից հետո ներկայացվում է ՀՀ ոստիկանության պետի հաստատմանը:
- Խմբի անդամը կարող է լինել 18 տարին լրացած, հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացի՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթներից:
- Խմբի անդամը պետք է դրսևորի իրեն, որպես բարձր բարոյականություն ունեցող անձնավորություն:
- Խմբի անդամն ընդգրկվում է խմբի կազմում 3 տարի ժամկետով:
- Խմբի անդամին ՀՀ ոստիկանության կողմից տրվում է անդամությունը հաստատող փաստաթուղթ:

### **ԽՄԲԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- Խումբն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ, սույն կարգով և խմբի գործունեության էթիկայի կանոններով:
- Խմբին առաջադրված խնդիրները լուծելու նպատակով, խմբի անդամներն իրավունք ունեն անարգել այցելել ՁՊՎ-ներ, հանդիպել ՁՊՎ-ում պահվող անձանց, ծանոթանալ ՁՊՎ-ի գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերին, ՁՊՎ-ում պահվող անձի համաձայնությամբ՝ նրա անձնական գործին և գրագրությանը, բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող փաստաթղթերի:
- Խմբի կողմից վերահսկողությունն իրականացվում է ՁՊՎ-ներ այցելություններ կատարելու հիման վրա՝ ՀՀ ոստիկանության պետին և հասարակությանը հաշվետվություններ ներկայացնելու միջոցով:
- Խումբը ներկայացնում է երկու տեսակի հաշվետվություն՝ ընթացիկ և տարեկան, որոնց կապակցությամբ ՀՀ ոստիկանությունը տալիս է իր մեկնաբանությունները:
- Ընթացիկ հաշվետվություններում կարող են ներկայացվել ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների խախտման, ինչպես նաև խմբի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու կոնկրետ դեպքեր:

- Տարեկան հաշվետվություններում կարող են ներկայացվել ՁՊՎ-ներում տիրող ընդհանուր իրավիճակը, հիմնական խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները, խմբի կողմից կատարված աշխատանքների արդյունքները և այլն:
- ՁՊՎ-ներ կատարած այցելությունների հիման վրա կազմված հաշվետվությունները կամ դրանց հատվածները հրապարակվում են ՀՀ ոստիկանության մեկնաբանությունների հետ միասին:
- Խմբի անդամը ՁՊՎ կարող է այցելել ցանկացած օր (այդ թվում՝ ոչ աշխատանքային օր): Այցելությունը կատարվում է խմբի առնվազն երեք անդամների մասնակցությամբ: Խմբի անդամը ՁՊՎ-ում պահվող անձի հետ, որպես կանոն կարող է հանդիպել մեկուսի, իսկ խմբի անդամի ցանկությամբ՝ ՁՊՎ-ի վարչակազմի ներկայացուցչի մասնակցությամբ:
- Խմբի ցանկացած անդամ կարող է արտահայտել իր անձնական դիրքորոշումը՝ հրապարակելով կամ արձանագրելով այն:

## XXIII. Հավելվածներ

### Հավելված 1

#### ՕՐՎԱ ԿԱՐԳԱՑՈՒՑԱԿԸ

1.	Վերկաց	6.00
2.	Հարդարանք և սանիտարական ժամ	6.00 - 7.00
3.	Մարմնամարզություն	7.00 - 8.00
4.	Նախաճաշ	8.00 - 9.00
5.	Ընդունում և հաշվառում	9.00 - 10.00
6.	Ազատ ժամ	10.00 - 14.00
7.	Ճաշ	14.00 - 15.00
8.	Ազատ ժամ / զբոսանք /	15.00 - 20.00
9.	Ընթրիք	20.00 - 21.00
10.	Ազատ ժամ	21.00 - 22.00
11.	Ավարտակոչ	22.00



## Հավելված 2

---

- սննդամթերք՝ ներառյալ մսեղեն, ձկնեղեն, երշիկեղեն, շաքար, թեյ, ճարպ, պաքսիմատ, խնձոր, սխտոր, սոխ, հաց, հացամթերք, մեղր, կարտոֆիլ, հյութեր, կոնֆետներ, թխվածքաբլիթներ, բացի տաքացման անհրաժեշտություն ունեցողներից, շուտ փչացող կամ պիտանելիության ժամկետը լրացածներից, խմորիչներից, ոգելից խմիչքներից և գարեջրից
  - ծխախոտ, լուցկի
  - մեկ լրակազմ սեզոնային հագուստ՝ առանց գոտիների, տաբատակալների և փողկապի, գլխարկ, կոշիկ՝ առանց կոշկաքուղերի
  - մեկ լրակազմ սպորտային համազգեստ կամ տնային խալաթ
  - ներքնաշորեր(երկու լրակազմից ոչ ավելի), գուլպա, զուգագուլպա (երկու զույգից ոչ ավելի)
  - ձեռնոցներ (մեկ զույգ)
  - թաշկինակներ
  - հողաթափեր
  - անձնական հիգիենայի պարագաներ (տնտեսական և ձեռքի օճառ, հեղուկ օճառ, քսուքներ, ատամի խոզանակ, ատամի մածուկ, պլաստմասսայե օճառամաններ, սանր, սափրվելու պարագաներ)
  - օպտիկական ակնոցներ
  - գլխաշոր, բրդյա գուլպաներ, կրծկալներ, թանգիֆ, վազելին, բամբակ, կանացի միջադիր, դիմահարդարման պարագաներ (կանանց համար)
  - հենակներ, ձեռնափայտեր, (փայտյա) պրոթեզներ (բժշկի թույլտվությամբ)
  - ճիւղայ կամ սպունգ
  - գրիչ, մատիտ.
  - գրելու թուղթ, տետրեր, փոստային ծրարներ, բացիկներ, նամականիշներ
  - հիգիենիկ թուղթ
  - մեկ լրակազմ անկողնային սպիտակեղեն (երկու սավան և բարձի երես, սրբիչ)
  - գրականություն,(ուսուցանող, կրոնական, պարբերական հրատարակություն) հինգ անվանումից ոչ ավելի
  - օրվա մամուլ
  - լուսանկարներ (երկուսից ոչ ավելի)
  - ՁՊՎ-ի բժշկի կողմից նշանակված դեղորայք  
Բացի թվարկվածից՝ ձերբակալված անձանց թույլատրվում է իրենց մոտ ունենալ և պահել քրեական վարույթին կամ իրենց օրինական իրավունքներին վերաբերվող փաստաթղթեր և գրություններ, ինչպես նաև պահպանության հանձնված դրամի, արժեքների, փաստաթղթերի և այլ առարկաների կտրոններ
- Ձերբակալված անձինք սափրման պարագաներից օգտվում են ՁՊՎ-ի աշխատողի հսկողությամբ:

## Հավելված 3

---

- **ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբ**  
ք.Երևան Դեմիրճյան 29-1ա  
հեռ. +374 10 56 87 42
- **ՀՀ գլխավոր դատախազություն**  
Վազգեն Սարգսյան 5  
հեռ.+374 10 511650
- **ՀՀ ոստիկանություն**  
ք.Նալբանդյան 130  
հեռ.+374 10 52 03 10

- Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ  
ք.Երևան Պուշկինի 56ա  
հեռ.+374 10 53 02 62
- Մարզային դատախազություններ  
Արագածոտնի մարզ +374 232 3 25 60  
Արմավիրի մարզ +374 237 6 21 81  
Արարատի մարզ +374 235 2 02 11  
Վայոց Ձորի մարզ +374 2812 30 51  
Շիրակի մարզ +374 312 2 11 00  
Գեղարքունիքի մարզ +374 264 2 34 50  
Կոտայքի մարզ +374 223 2 24 43  
Տավուշի մարզ +374 263 3 24 04  
Լոռու մարզ +374 322 2 25 67  
Սյունիքի մարզ +374 285 2 34 13

## Հավելված 4

---

### ՀՀ-ում գործող դեսպանատները

- ԱՄՆ  
ք. Երևան, Ամերիկյան շ.1, հեռ.+374 10 49 42 00
- Ֆիլիպիններ  
ք. Երևան, Չարենցի 25, հեռ. +374 10 55 26 14
- Մարոկկո  
ք. Երևան,  
Սայաթ Նովա 33ա, հեռ. +374 10 52 98 02
- Սլովենիա  
ք. Երևան, Փարպեցի 22, հեռ.+374 10 53 15 00
- Հվ.Կորեա  
ք. Երևան, Հայասա 1, հեռ. +374 10 5816 07
- Կանադա  
ք. Երևան, Ամիրյան1, հեռ. +374 10 56 79 90
- Ղաղաբաղ  
ք. Երևան, Ջարյան 17ա, հեռ. +374 10 24 99 28
- Շվեդարիա  
ք.Երևան,Կորյունի առ. նրբ.,շ.11, հեռ. +374 10 52 40 88
- Արգենտինա  
ք. Երևան, Իտալիա, շ.1, հեռ. +374 10 58 00 95
- Ֆրանսիա  
ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 8, հեռ. +374 10 59 19 50
- Մեծ Բրիտանիա  
ք. Երևան, Բաղրամյան 34, հեռ. +374 10 26 43 01
- Գերմանիա  
ք. Երևան, Չարենցի 29, հեռ.+374 10 58 65 91
- Սիրիա  
ք. Երևան, Բաղրամյան 14,հեռ. +374 10 52 40 36
- Ռումինիա  
ք. Երևան, Բարդիուսի 15, հեռ. +374 27 53 32
- Թուրքմենստան  
ք. Երևան, Երզնկյան 52, հեռ. +374 22 10 29
- Ուկրաինա

- Ք. Երևան, Արարկիր 29, տ. 5/1, հեռ. +374 10 22 97 27  
Ուրուզվա
- Ք. Երևան, Ալեք Մանուկյան 7/5, հեռ. +374 10 55 94 49  
Էստոնիա
- Ք. Երևան, Գյուլբեկյան 43, հեռ. +374 10 26 39 75  
Լիտվա
- Ք. Երևան, Բաբայանց 2/13, հեռ. +374 10 29 76 80  
Բելոռուս
- Ք. Երևան, Նիկոլ Դումանի 12-14, հեռ. +374 10 22 02 69  
Բրազիլիա
- Ք. Երևան, Սիմեոն Երևանցու 57, հեռ. +374 10 50 02 10  
Բուլղարիա
- Ք. Երևան, Սոֆիայի 16, հեռ. +374 10 45 82 33  
Եգիպտոս
- Ք. Երևան, Սեպուհի 6ա, հեռ. +374 10 22 01 17  
Թաիլանդ
- Ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 4/1, հեռ. +374 10 54 23 31  
Ինդոնեզիա
- Ք. Երևան, Իսրայելյան 37գ, հեռ. +374 10 56 56 69  
Իսպանիա
- Ք. Երևան, Չարոբյան 10/2, հեռ. +374 10 56 58 43  
Իտալիա
- Ք. Երևան, Իտալիայի 5, հեռ. +374 10 54 23 36  
Իրան
- Ք. Երևան, Բուդաղյան 1, հեռ. +374 10 23 29 20  
Լեհաստան
- Ք. Երևան, Հանրապետության 44ա, հեռ. +374 10 54 24 95  
Լիբանան
- Ք. Երևան, «Ձորագյուղ» 1-ին փող. 13/14, հեռ. +374 10 50 13 03  
Կիպրոս
- Ք. Երևան, Մոսկովյան 28, հեռ. +374 10 54 55 88  
Հնդկաստան
- Ք. Երևան, Չորափի 50/2, հեռ. +374 10 53 91 75  
Հունաստան
- Ք. Երևան, Դ. Դեմիրճյան 6, հեռ. +374 10 53 00 51  
Հունգարիա
- Ք. Երևան, Չաքյան 2, հեռ. +374 10 53 89 57  
Ղազախստան
- Երևան, Մ. Բաղրամյան 2-րդ փակ. 1, հեռ. +374 10 21 13 33  
Ղրղստան
- Ք. Երևան, Արշակունյաց 67, հեռ. +374 10 44 00 44  
Մալթայի Ինքնիշխան Ուխտի Ղեսա
- Ք. Երևան, Ամիրյան 1, հեռ. +374 10 23 69 32  
Նորվեգիա
- Ք. Երևան, Թամանյան 6, 14, հեռ. +374 10 56 55 87  
Շվեդիա
- Ք. Երևան, Աբովյան 34/7, հեռ. +374 10 56 96 98  
Չինաստան
- Ք. Երևան, Մ. Բաղրամյան 12, հեռ. +374 10 56 00 67  
Ռուսաստան
- Ք. Երևան, Գր. Լուսավորիչ 13ա, հեռ. +374 10 56 74 27  
Սերբիա
- Ք. Երևան, Նար-Դոսի 75/28, հեռ. +374 10 92 96 51  
Սլովակիա
- Ք. Երևան, Սայաթ-Նովա 19, հեռ. +374 10 53 25 53  
Վրաստան
- Ք. Երևան, Արամի 42, հեռ. +374 10 56 41 83  
Ֆինլանդիա
- Ք. Երևան, Խանջյան 50, բն. 14ա, հեռ. +374 10 56 55 87

## Հավելված 5

---

- ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակ  
Մ. Երևան, Կորյունի 8, քիվ 5, հեռ. +374 10 58 60 15

## Հավելված 6

---

- Վճռաբեկ դատարան  
ք.Երևան Վազգեն Սարգսյան 5  
հեռ.+374 10 51 17 45

Հայաստանի Հանրապետության ոստիկանության  
ծերբակալված անձանց պահելու վայրերում  
վերահսկողությունն իրականացնող  
հասարակական դիտորդական խումբ

*Թեժ.գիծ. 077 85 99 66*

Ք.Երևան Դեմիրճյան 29 - 1ա  
հեռ. +3741 56 87 42, ֆաքս. +3741 56 87 42  
էլ.փոստ [policemonitor@list.ru](mailto:policemonitor@list.ru)



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



COUNTERPART



CIVIC ADVOCACY  
SUPPORT PROGRAM - ARMENIA

«Սույն հրապարակումը, հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության No 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում «Մարդու իրավունքների պաշտպանության Երևանյան կենտրոն» և «Օրենք և Իրավապաշտպանություն» ՀԿ-ների միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Մարդու իրավունքների պաշտպանության Երևանյան կենտրոն» և «Օրենք և Իրավապաշտպանություն» ՀԿ-ների պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:»